Խնձորուտ

Բնակչության թիվը՝ 532

Բնակավայրը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի հարավ-արևմտյան հատվածում, սահմանակից է մարզի Նոր Ազնաբերդ, Մարտիրոս, Գնիշիկ գյուղերին և Նախիջևանի Հանրապետությանը։

Գյուղը հիմնադրվել է 1827թ. ռուս-պարսկական Գյուլիստանի պայմանագրի համաձայն՝ Պարսկաստանից հայ ազգաբնակչության ներգաղթի արդյունքում։ Չնայած բնակլիմայական անբարենպաստ պայմաններին (սակավաջուր, չոր կիսատափաստանային հողերի) գյուղն աստիճանաբար զարգանում է և ապահովում բնակչության աճ։

Մինչև խորհրդային կարգերի հաստատումը գյուղը պատկանել է Նախիջևանի նահանգի Շարուր Դարալագյազ գավառին։

Խնձորուտը հարևան գյուղերից կտրված շուրջ 20 կմ-ով և թշնամու (Նախիջևանի) դեմ հանդիման ունի շուրջ 25կմ սահման։

Բնակչության հիմնական զբաղվածությունը եղել է անասնապահությունը և հողագործությունը։

Գյուղն ունի դպրոց, բուժկետ։